Մրցույթ GIS վերլուծաբան և տեխնիկական փորձագետ

Թափուր հաստիք

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Ministry of Environment of Armenia աջակցությամբ, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան գրասենյակի և Ռեսուրսների համաշխարհային ինստիտուտի կողմից իրականացվող <<**Կովկասի տարածաշրջանում անտառի գլոբալ մոնիտորինգի արդիականացում**>> ծրագրի շրջանակներում հայտարավրում է մրցույթ GIS վերլուծաբան և տեխնիկական փորձագետի թափուր հաստիքի համար:

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է՝ որոշում կայացնողների և քաղաքացիական հասարակության համար ներկայացնել տեխնոլոգիաներ և տեղեկատվության հավաքագրման գործիքներ, որոնք օգնում են նվազեցնել անտառահատումները, նպաստում են անտառի կենսաբազմազանության վերականգնմանը և պահպանմանը՝ զարգացնելով օգտատուների համար նորարարական մոտեցումներ, որոնք դյուրին են դարձնում տեղեկատվության ստացումը և ապահովում են վերլուծությունների իրականացումը:

Անհրաժեշտ որակավորումներ.

• Համալսարանական կրթություն աշխարհագրության, GIS, Տեղեկատվական համակարգերի, Անտառագիտության, բնական ռեսուրսների կառավարման կամ հարակից այլ ոլորտում;
• առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ, գեո տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների կառավարման ոլորտում
• GIS ծրագրակազմի իմացություն, ներառյալ ESRI գործիքներ, ինչպիսիք են **ArcGIS Առցանց, ArcGIS Desktop, ArcGIS Enterprise և ArcGIS Hubs;**
• Վերլուծական ուժեղ հմտություններ;
• Հայաստանի անտառային ոլորտի իմացություն ու փորձ;
Նախաձեռնող, սակավ առաջնորդությամբ գործը ինքնուրույն իրականացնելու պատրաստակամություն;
•Միջանձնային շփման հմտություններ, ՝ տարբեր մշակույթների և տարբեր ժամանակային գոտիներում անհատների և գործընկերների թիմերի հետ աշխատելու ունակություն;
Արտասահման, այդ թվում՝ ԱՄՆ, ճանապարհորդելու ունակություն:

Նախընտրելի որակավորումներ.

• Python կամ նմանատիպ գործիքների միջոցով փոքր ծրագրերի և սցենարների գրելու փորձ;
• Միջազգային կամ կառավարական կազմակերպությունների հետ աշխատելու փորձ:

Անհրաժեշտ և պարտադիր պայման է հայերենի և անգլերենի տիրապետումը (գրել, կարդալ, խոսել):

Հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց CV-ները և հետաքրքրվածության նամակը էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով reccarmenia@gmail.com.

Դիմումի վերջնաժամկետը՝ ապրլի 25, 2020, 17:00.